ԳՈՒՐԳԵՆ ՎԱՉՅԱՆԻ ԽԵՑԵԳՈՐԾԱԿԱՆ ՎԵՐԱՑԱՐԿՈՒՄՆԵՐԸ

ԳԱՅԱՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու
Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հոդվածը նվիրված է խեցեգործ-նկարիչ Գուրգեն Վաչյանի ստեղծագործական աշխարհի բացահայտմանը, կավանյութի մեջ հեղինակի հոգևոր գեղարվեստական ընկալումների բնութագրմանը: Քննության են առնվում Գուրգեն Վաչյանի՝ վերջին տարիներին ստեղծած վերացական արվեստին հարող կավե ստեղծագործությունները: Գուրգեն Վաչյանի ստեղծագործական աշխարհում կարևորվում են հատկապես գեղարվեստական մշտական նորարարական փորձարարություններն ու նյութի հետ աշխատելու մեծ համարձակությունը:

Բանալի բառեր. *Գուրգեն Վաչյան, խեցեգործություն, վերացական արվեստ, հայ արվեստ:*

Ժամանակակից հայկական խեցեգործության բնագավառում մեծ տարածում է ստացել կավե յուրօրինակ «արտ-օբյեկտների» ստեղծումը: Հայկական ավանդական դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշները և կիրառական նշանակությամբ խեցեգործական իրերը վարպետների հմուտ ձեռքերում վերածվում են գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործությունների: Հոդվածում փորձ է կատարվել ներկայացնել, թե ինչպես կավը կարող է ներմուծվել ժամանակակից արվեստի կոնցեպտուալ դաշտ:

Գուրգեն Վաչյանի մոտ սերն առ արվեստ ձևավորվել է դեռևս մանուկ հասակում. նա մեծացել է արվեստասեր-հավաքորդի ընտա-

նիքում և սերտորեն առնչվել բարձրարվեստ ստեղծագործությունների հետ: Առաջին մասնագիտական կողմնորոշումները սկսել է զարգացնել Հակոբ Կոջոյանի անվան գեղարվեստի դպրոցում, այնուհետև Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում: 2016-ին ավարտելով ակադեմիայի խեցեգործության բաժինը՝ Վաչյանն անդրադարձել է հին հայկական կավագործության ավանդույթների նորովի վերարժևորման, ինչպես նաև խեցեգործության մեջ գեղանկարչական նոր ձևամտածողություն ներմուծելով՝ ինքնատիպ ձեռագիր ստեղծելու խնդրին:

Կնոջ՝ Էլմիրա Չոփիկյանի հետ նա հիմնադրել է «Qnar ceramic studio»-ն, որտեղ հայկական խեցեգործության և մանրանկարչության, մասնավորապես Քութահիայի սափորարվեստի լավագույն ավանդույթներով կիրառական իրեր ստեղծելուց բացի, կերտում է, իր իսկ խոսքերով ասած, «արվեստ իր համար». դրանք վերացական արվեստի ոճով կատարված աշխատանքներ են, որոնցում արտացոլված են հեղինակի անձնական հույզերն ու ստեղծագործական երևակայությունը: Վաչյանը նաև զբաղվում է դասախոսական գործունեությամբ՝ իր մասնագիտական հմտությունները փոխանցելով ակադեմիայի խեցեգործության բաժնի ապագա արվեստագետներին:

Գուրգեն Վաչյանի կերտած կավե ստեղծագործությունները յուրօրինակ փերֆորմատիվ ներգործության մեջ են մտնում դիտողի հետ: Արվեստի աշխարհում ոճի ստեղծման հարցում մեծ կարևորություն ունի հեղինակի գեղարվեստական մտածողությունը: Ոճաստեղծման հիմնաքարը բովանդակությունն է, որին փարվում են ձևաստեղծ տարրերը, ինչպես նաև կատարման նյութերն ու մեթոդները: Գուրգեն Վաչյանի ստեղծագործական աշխարհում մեծ տեղ են զբաղեցնում հատկապես տեխնիկական ու գեղարվեստական մշտական փորձարարություններն ու նյութի հետ աշխատելու մեծ համարձակությունը: Վաչյանի գործերի մեծ մասը տարբերվում է իր գեղարվեստական խոր մտահղացումներով, վառ արտահայտչականությամբ և աշխարհի հանդեպ խոհափիլիսո-

փայական մոտեցմամբ: Ստեղծագործական կյանքի ոչ այնքան երկար ժամանակահատվածում նա կարողացել է կերտել իր անհատական խեցեգործական ձեռագիրը: Կավի հետ աշխատանքում նա նախընտրում է մշակման բարդ լուծումները և յուրօրինակ գունային համադրությունները, որոնք տարեցտարի կատարելագործվում են:

Կերպարվեստում կատարելության հասնելու ձգտումներում նրան օգնում է Էկվադորում Գեղարվեստի ակադեմիայի գեղանկարչության բաժնում որոշ ժամանակ ուսանելու հանգամանքը: Կավե աշխատանքներն էլ ավելի հետաքրքիր գեղարվեստական դրսևորում են ստանում շրջանակի կիրառությամբ, որի միջոցով կերպարվեստի մի տեսակից սահուն անցում է կատարվում մյուս տեսակին (նկ. 1, 2): Նա կիրառում է ենթաջնարակային պոլիքրոմ տեխնիկա, որը թույլ է տալիս ավելի լայն հնարավորություններ ստանալ ձևաստեղծման առումով: Գրեթե բոլոր գործերում նա կարծես ուսումնասիրում է ձևի ու նկարազարդման հարաբերությունները, որոնք արտահայտվում են միասնականորեն:

Վաչյանի ստեղծագործությունները փոխանցում են հեղինակի հուզական աշխարհն ու հոգեվիճակները, ռիթմիկ ու երանգային անցումները: Հեղինակը կարողանում է վարպետորեն կիրառել նաև ինքնատիպ մակերևութաստեղծ «ձգումները»՝ հոսուն երաժշտականություն հաղորդելով կավի մակերեսին: Նրա անհատական ձեռագիրն առավել ակնհայտ դրսևորում է գտել վերջին տարիների վերացական ստեղծագործություններում, նաև՝ շնորհիվ գեղանկարի ու պլաստիկայի համարձակ համադրումների, որոնք թույլ են տալիս պահպանել լակոնիկ ծավալները (նկ. 3, 4): Վերացական արվեստին հարող կավագործական նմուշներում Վաչյանը մատուցում է տարածության ու ժամանակի մեջ առարկայի գոյության խնդրի սեփական լուծումները: Հատկապես նշանակալի են իմպրովիզային կատարումները՝ հեղինակի համար նախընտրելի դարձած տեխնիկական լուծումներով, որտեղ կա-

րելի է հանդիպել տարբեր ջերմաստիճանի տակ թրծված բազմաշերտ կավային զանգվածների, ջնարակման բարդ համադրումներով մակերևութաստեղծ մեթոդների: Գուրգեն Վաչյանը մշտապես ձևակերտ փնտրտուքների մեջ է՝ փորձելով նոր լուծումներ գտնել խեցարվեստի հիմնական բաղադրիչների՝ պլաստիկ մտածողության, գույնի հետ աշխատելու կարողության, ձևաստեղծման հնարավորությունների և յուրահատուկ արտահայտչալեզվի սահմաններում:

Գուրգեն Վաչյանի ստեղծագործությունները, կարելի է ասել, ոճաստեղծող են ժամանակակից հայկական խեցեգործության ասպարեզում: Դեկորատիվ-կիրառական արվեստի այս բնագավառն ամփոփում է ստեղծագործության համաժամանակյա գոյությունը՝ թե՛ նյութական-կիրառական, և թե՛ հոգևոր-հայեցական աշխարհներում՝ մարմնավորելով երբեմնի ծիսապաշտամունքային հոգևոր ընկալումների նորօրյա դրսևորումները:

Վաչյանի որոշ աշխատանքներում պլաստիկ նյութականության հետ մեկտեղ նկատելի է կավի հոսողունակության շեշտադրման շնորհիվ նյութի վերածումն ամորֆ սկզբնանյութի, որն իր ինքնուրույն ճանապարհն է հարթում արվեստի աշխարհում: Պլաստիկ նյութի հետ աշխատելու կարողությունը թույլ է տալիս ստեղծել գեղարվեստական ուժեղ արտահայտչականությամբ օժտված դեկորատիվ հորինվածքներ (նկ. 5, 6): Հաճախ կավե իրերի կիրառականությունը քողարկված է շեշտված դեկորատիվ լուծումների ներքո՝ դրանք դարձնելով միջավայրի մեջ միջավայրի հետ երկխոսող «արտ-օբյեկտներ»:

Վաչյանի գործերում գիծն ու գույնը կազմում են վերացական պատկերներ, որոնցով հեղինակը փորձում է ստանալ բնական երևույթների գեղարվեստական նմանակում: Նրա համար որպես ոգեշնչման կարևոր աղբյուր են ծառայում բնության իմանենտ ու անորսալի պահերը, որոնք կավի լեզվով ու վերացական ոճի միջնորդությամբ փոխանցվում են ստեղծագործություններին: Այդ վերացական միջավայրում, առարկայական աշխարհից անդին՝

հոգևորի կարևորումն է ու դրա արտացոլումը նյութի մեջ: Այս համատեքստում արվեստագետի համար կարևորվում է ոչ միայն և ոչ այնքան վերջնարդյունքը, որքան առավել աշխատանքային և ստեղծագործական ընթացքը, կրակի, բազմաշերտ ջնարակի, ավազափոշիների, աղային զանգվածների հետ խաղը, անդադար փորձարկումները, խառը տեխնիկաների ներմուծմամբ տարբեր միջոցների ու թրծման հաղորդակցման վայելքը:

CERAMIC ABSTRACTIONS BY GURGEN VACHYAN

GAYANE POGHOSYAN
PhD in Art History
State Academy of Fine Arts of Armenia

ABSTRACT

The article is devoted to the revealing the creative ceramic world of Gurgen Vachyan and the description of his artistic perception in clay material. Auther's abstract ceramic works, created in recent years, are examined in this article. There is a special place for constant artistic innovative experiments as well as courage in working with material in Gurgen Vachyan's creative world.

Key words: *Gurgen Vachyan, ceramic, abstract art, Armenian art.*

КЕРАМИЧЕСКИЕ АБСТРАКЦИИ ГУРГЕНА ВАЧЯНА

ГАЯНЭ ПОГОСЯН
Кандидат искусствоведения
Государственная академия художеств Армении

РЕЗЮМЕ

Данная статья посвящена раскрытию творческого мира художника-гончара Гургена Вачяна и описанию его художественного восприятия глиняного материала. В данной статье рассматриваются абстрактные керамические работы Гургена Вачяна созданные в последные годы. В творческом мире Гургена Вачяна особое место занимают постоянные художественные новаторские эксперименты и смелость в работе с материалом.

Ключевые слова: *Гурген Вачян, керамика, абстрактное искусство, армянское искусство.*

1

2



3

Նկ. 1. Օրգան #1,2022, 50x76, Կավ, կվարցային փոշի, ջնարակ:
Նկ. 2. Սիմֆոնիա #8, 2022, 45x63, 59x77, Կավ, անգոբ:
Նկ. 3. Ժայթքում, 2022, 58x58, Կավ, շամոտ, կվարցային փոշի, գունաներկով անմշակ ջնարակ:

Նկ. 4. Դոինա (Ռումինական շրջան), 2022, 50x68, Կավ, շամոտ, ջնարակ:
Նկ. 5. Տիկնիկ #25, Կավ, ջնարակ:

6

Նկ. 6. Գուրգեն Վաչյան, Սափոր #18, Կավ:
Նկ. 7. Ասամբլյաժ,2022, 28x28, 33x33, Կավ, անգոբ:



7